

«Որ եւ լսեաց այնմ բանի,
Փրկիտփայն քաջ եւ արի,
Ձոր Գրիգորի նման լինի,
Նարեկավանից վանականի:
Հայոց յազգէ ծնեալ լինի,
Ի յնստանա մեծ դաւառի,
Որ մականունն Բրքութ ասի,
Եւ Յովհաննէս նա յորջորջի:
Ի բնէ նա աշակերտի,
Ներսեսի քաջ վարժապետի,
Որով բանի հմուտ լինի,
Ձնարեկացին յորդ մեզ պատմի.
Եւ հին ու նոր կտակարանի,
Ի վեր է քան զիմաստ բանի.
Ստացաւ զգիրս քարոզի,
Յիշատակ անջնջելի,
Ի յամերամ ժամանակի,
Եւ ծնաւզացն իւրոյն բարի,
Ղուլիջանի եւ Նուբարի,
Եւ եղբարցն հարազատի,
Ոսկեւանի եւ Մուրատի,
Եւ եղբարորդոյն Բահլուլի,
Անփորձ պահէ Տէր ի յերկրի:
Է նա բնական Վառնիշատցի,
Ի Պատրկայ մենաստանի,
Որ է հանդէպ Ոստան քաղքի,
Մաւրն լուսոյ Աստուածածնի,
Եւ Գէորգեա զօրավարի,
Եղիշէի դանբարանի,⁷
Երախտաւոր Հայոց ազգի⁸»:

Բրգութենց Յովհաննէս վարդապետին
ստաճին անգամ կը հանդիպինք «ի վանս Եղի-
շէի⁷», 1579ին⁹. հոս էր զեռ 1582ին: ՄԼԲ-

7 Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւն ի Փոքր
եւ ի Մեծ Հայս, Վենետիկ 1864, էջ 255 կը գրէ. «Ձա-
ղար Ս. Նշան (կամ Ձարահան). Վանք Աստուածածնի
առ ի կողաց Արտոս լերին, զեղեցկազիւր եւ բարձրա-
հայեաց ի վերայ ձորաբերանոյն Ոստանայ: Ձէ ինչ նշա-
նաւոր մենաստանս փոքր եւ անշուք, այլ ցանկալի ա-
մենայն հայրենասիրաց, զի անդ է զերեզման Եղիշէի
վարդապետի սրբոյ. որ նախ յեկեղեցւոյ Վառնիշատ
զեղջն թաղեալ է, որ առնթիւր նորա կոյ եւ արդ ա-
մայի, եւ իրեւ քառասուն ամօք յառաջ վարդապետ
ոմն եհան անտի գնչխարսն եւ բերեալ հանդոց ի վանս
յայս»: Հմմտ. եւ Բնճիճեան, Նոր Հայաստան, Վենետ.
1806, էջ 160. «Վառնիշատ: Գրեզ Հայոց յորում են
առնք իրր 15 ի դաշտի առ Ոստան գետակաւ. ի քարա-
շէն եկեղեցւոյ սորա որ է փոքր ի միջին սահմանի
առ որմով կոյ զերեզման սրբոյն Եղիշէի վարդապե-
տին, կրով պատեալ զինի եկեղեցն: Առ հիւսիսային
ստորոտով Առնոս լերին է մենաստան սրբոյն Եղիշէի,
մեծ եւ համակ քարաշէն, որպէս եւ եկեղեցի նորա որ
եւ ունի կաթուղիկէ»:

8 Էջմ. 2077 (Քարոզիքը Գր. Տաթևացւոյ, յամէ
1424):
9 Գրեան Հայոց պատմութեան, Ժ., 502:

ձակայ Անգղայ կամ Գարենից Ձիթատուր
վանքի եկեղեցւոյն դրան վրայ կը կարգանք
արձանագրութիւնս.

ԳՐԳՈՒԹԻՆՅ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ
ՅԻՇԵՅԷՔ Ի ԲՐԻՍՏՈՍ. ԹՎ. (Ռ)ԼԳ (1584)¹⁰:

Յովհաննէս Բրգութենց ունէր իր շուրջը
աշակերտներ, որոնց մէջ նշանաւոր հանդի-
սացան Սիմէոն Ապարանցի եւ Բարսեղ Գա-
ւաոցի, ինչպէս նաեւ Ներսէս Բաղիշեցի:

Կարապետ Բաղիշեցի կը գրէ. «Իսկ ա-
շակերտքն Յովհաննէս Ոստանցւոյն Սիմէոն
Ապարանցի եւ Բարսեղ Գաւաոցի» (Ա.Ռ.
Դաւր. 441):

Վերջնոյ համար կ'օրինակէր 1594ին ի
Հիդան Մարտիրոս Հիզանցի Աստուածաշունչ
մը, յիշատակարանին մէջ կը խնդրէ յիշել
«սրբասէր եւ հեղահոգի բանիբուն եւ աս-
տուածաբան երիցս երանեալ քաջ բարունա-
պետն տէր Բարսեղ եւ զհոգեւոր որդիքն զՅո-
հաննէս եւ զՀայրապետ աշակերտքն. այլ եւ
զհոգեւոր ծնօղն իւր զարի եւ զերջանիկ
զԲրգութենց (տպ. զԲրգութենց) Յովհաննէս
բարունապետն¹¹»: Բարսեղ վարդապետ ինք-
նին կը գրէ 1598ին յԱմիրտուրու վանս օրինա-
կած Գործոց Մեկնութեան մէջ. «Այլ եւ ու-
սուցչին իմոյ քաջ հոետորին Յովհաննէս
բարունապետին որ մականունն Բրկութենց
ասի, եղիցի յիշատակ մատեանս այս. եւս ա-
ռաւել աշակերտաց եւ հոգեւոր որդւոց մե-
րոց Յովհաննէսին, Հայրապետին եւ այլոցն,
որք առին գաւազան եւ ելին: Արդ... յի-
շեցէք... զնուստ Բարսեղ վարդապետս...
որ եմ... ի նահանգին Գաւաոց, ի գեղջէն
Կարպեղայ¹²»: Կը գրէ նոյն Բարսեղ վարդա-
պետ նաեւ 1604ին օրինակած Ներսէս Կլայեց-
ւոյ Մատթէի Մեկնութեան մէջ. յիշեցէք
«նաեւ զուսուցանող վարժապետն իմ զՅո-
վաննէս բարունապետն որ մականունն Բրգու-
թենց կոչի¹³»:

Իսկ Սիմէոն Ապարանցի իւր Վիպասա-
նութեան մէջ կը հիւսէ իւր ուսուցչին զովա-
սանքը¹⁴, ուր ի մէջ այլոց կը գրէ.

10 Ս. Լեւոնեան, Բիւզանդիոն, 1907, Թ. 1277:
Վանքիս մասին տե՛ս Սարգիսեան, անդ, 255:
11 Քորոս Աղբար, Բ., 263:
12 Էջմ. 2605, Թղ. 211ա: Հայաստան, 1851,
Թ. 86:
13 Էջմ. 1282, Թղ. 256բ—257ա:
14 Սիմէոն վարդապետի Ապարանցւոյ Վիպասա-
նութիւն: Վաղարշապատ 1870, էջ 129—133:

Ձի հրեշտակացն էր նա սարաս,
Անհամեմատ յերկրաւորացս.
Սրբազանիցըն դերադաս,
Տէր Յովհաննէս Հոգւովն օծեալս:
Սուրբ վարդապետս աստուածաբան,
Լուսաւորիչ թորգոմածնաց,
Արդ ի յերկինս է վերելած,
Ի յանդրանկաց խորանս մըտած:
Արեւն ի մայրն վերադարձած,
Արուսեկին պայծառացած.
Ձիմանալին անտեսն յաչաց,
Վարձս ընկալեալ աշխատանաց:
Նըշոյլք լուսոյն անբաժ մնացած,
Յեկեղեցեաց Հայաստանեաց.
Իմաստութիւնն արձանացած,
Գանձ, մեղեդի, երգ սըրբասաց,
Ձհողեւորն պըտուղ շրթանց,
Գրով թողեալ աշակերտաց.
Ի յառազաստ սիգաճեմած,
Ընդ երջանկացըն գոլ բերկրած:

Յովհաննէս Բրգութենցի կենաց եւ դոր-
ծունէութեան վրայ աւելի տեղեկութիւն չեն
հաղորդած ժամանակակիցները: Ունինք իւր
ինքնագիր տողերէն հետեւեալ ծանօթութիւն-
ները.

Էջմիածնի Թ. 2077 ձեռագրին մէջ, որ
Գրիգոր Տաթևացւոյ Քարոզիքի Ա. հատորն
է եւ ժամանակաւ պատկանած Ներսէս Բաղի-
շեցւոյ, կը գրէ Բրգութենց հետեւեալ նոտրա-
զիր տողերս (Թղ. 359բ), հաւանօրէն 1582ին.

«Ձվերջացեալս ի շնորհաց զՅոհան արուպ
վարդապետս ծառա դրոցս Քարոզիցս յիշե-
ցէք ուլ ընթերցողք»:

Դարձեալ Էջմիածնի Թ. 852 ձեռագրին
մէջ, որ Գրիգոր Տաթևացւոյ Հարցմանց
գիրքն է, կը կարդանք.

«Ես Յովհաննէս վարդապետս ի յնստանս,
ստացա սուրբ մատեանս ի վայելումն անձին
իմում. որք աւագիք ի սմանէ ո՛վ վարդա-
պետք եւ դրոց աշակերտք, յիշեցէք ի մաքրա-
փայլ յաղօթս ձեր զՅովհաննէս վարդապետն.
եւ Աստուած ողորմի ասացէք ծնօղն նորա.
հօրն Ղուլիջանին եւ մօրն Նուբարին. եւ եղ-
բարցն Մուրադին եւ Ոսկէվանին եւ եղ-
բորորդոյն Բահլուլին. եւ Աստուած ողորմի
ասացէք նոցա. ամէն» (Թղ. 4բ):

«Ձվերջին ստացող սուրբ Հարցմանցս
զնստանցի Յովհաննէս դրոց ծառայ եւ յետին
բանասիրաց յիշեցէք...» (Թղ. 65բ):

«Գիրքս Յովհաննէս վարդապետին է, որ
մականունն Բրկութենց կոչի...» (Թղ. 106բ):

«Ես Յովհաննէս վարդապետ յնստանայ,
որ սուրբ տառս ստացայ յիշատակ ինձ...:
Գիրքս Յովհաննէս վարդապետին է յնստանայ
ի սուրբ ուխտէն Պատրկայ որ հանդէպ քա-
ղաքին Ոստանայ» (Թղ. 273ա):

Ձեռագրիս գրիչն է Գէորգ, որդի Առա-
քել երէցի, որ Թղ. 305բ. ունի յիշատակա-
բանս. «Ձանարժան ոգիս... զԳէորգ անպի-
տան եր» (երէցս) յիշեա յաղաւթս քո, ուլ
ցանկացող սորա եղբայրական կամաւք...
նաեւ ստացողի սորին Յովհաննէս կրանա-
ւորի»:

Կ'երեւայ թէ Յովհաննէս Բրգութենց այս
ձեռագիրը կտակած է տէր Աստուածատու-
րին, ինչպէս Թղ. 305բ յիշատակագրութիւնս
կ'իմացնէ. «Ես Ներսէս արեղայս, որ զիմ
տիրոջն տիաթիկն կատարեցի որ զՀարցմանցս
տէր Աստուածատրին տուեր է. այլ մարդ ի
մեր ազգականացն իշխանութիւն չունի որ
տաւի այնէ...»:

Յովհաննէս Բրգութենց վախճանած է
1589 տարւոյն, այս ինքն Սիմէոն Ապարա-
նցւոյ Վիպասանութեան գրութիւն (1590)
տարի մը յառաջ, ինչպէս կը գրէ Սիմէոն
(129).

Հոգւոյ հօրէ որբացելոյ,
Միակ ամաց լըրացելոյ:

ԳՐՈՒԹԻՆՅ
Խաչիկ Լեւոնեան, Բիւզանդիոն, 1903,
Թ. 2031 կը գրէ, թէ Խաչատուր, Աղթամարի
կաթողիկոսը Նարեկայ վանքէն Աղթամար
փոխադրած է նոյն վանքին գրչագիրներն եւ
գանձերը. «որոնց մէջ աչքի կը զարնէ մաս-
նաւորապէս Գանձ գիրք մը, հեղինակուած
Բրգութենց մականուանեալ Ոստանցի Յով-
հաննէս վարդապետին...: Այս գանձերը կը
վերաբերին Աղթամարայ Ս. Խաչին եւ Թով-
մաս առաքելոյն իրեւ ներքողականներ, որոնք
ձայնաբաղ են եւ բաւական կանոնաւոր ոճ
մ'ունին»: Կը գրէ նաեւ Փիլիպպիճեան¹⁵, թէ
տեսած է յԱղթամար 1602ին դրուած Գան-
ձարան մը. «ի հեղինակս գանձուցն յիշին
Յովհաննէս Վ. Պուտլիկցի, Յովհ. Վ. Ու-
սանցի ի զարմէ Բրգութեանց. սորա գանձ
ի Ս. Խաչն Աղթամարայ ի Թվ. ՌԼԷ (1588)»:

¹⁵ Պոստրեան, Յիշատակարանք:

Եւ դարձեալ¹⁶ «ՌԻԸ. 1579. Բրգութենց Յով-
հաննէս գանձասաց ըարունին ծաղկի ի վանս
եղիչէի»:

Թէ Բրգութենց յօրինած է Գանձեր եւ
Մեղեղիններ, կը վկայէր Սիմէոն Ապարանեցի,
երբ կը գրէր.

Գանձ, մեղեղի երգ սրբասաց,
Զհոգեւորն պըտող շրթանց,
Գրով թողեալ աշակերտաց:

Իր Գանձերէն եւ Մեղեղի-Տաղերէն ծա-
նօթ են ինձ հետեւեալները միայն.

1. Գանձ Գետարգել սուրբ Նշանին¹⁷, ի
Բըրգութենց Յովհաննէս վարդապետէ Ու-
տանցոյ:

Կապի Գանձիս

Յիսուս Աստուած, Տէր միակի,
Որ արարիչ ես բնանի,
Վերելեկաւոյ քո խաչի,
Անմահ Քրիստոս Տէր կենդանի,
Նըշանաւոյ հըրաշալի,
Ի քառաթեւ սուր երկայրի,
Սուրբ Գետարգել խաչ պանծալի,
Ին Աստուած ի քեզ բազմի:

Յարմարական դրուատ բանական,
Քեզ երգեսցուք հայր անցընական...

Վ. Եւ յարմարող գանձիս թերական,
Ըզբըրգուտենց ըարունին տարտամ:

Տունք՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ:


ՁեՆԱԳԻՐ՝ էջմ. 2672, թղ. 404բ (1607):

2. Տաղ Գետարգել սուրբ Նշանին ի Յով-
հաննէս Բըրգուտենց վարդապետէ:

Յորժամ եկեալ մեծ թագուհին
ՅՅրուսաղէմ սուրբ քաղաքին...

ՁեՆԱԳԻՐ՝ էջմ. 2672, թղ. 406բ (1607):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



¹⁶ Գիւան Հայոց պատմութեան, Ժ., 502:

¹⁷ Գետարգել Ս. Նշան եկեղեցին է մին յեօթն
եկեղեցեաց Ներքին վարազի. հմտ. Սարգիսեան,
անդ, 257. Շէրենց, անդ, 60:

ՄԱՅԻՄ, ՄԱՅԻՄ, ՄԱՅԻՄ ԵՒ ՄԱՅԻՄ

Ստոյն Կալլիսթենէսի Աղեքսանդրու վա-
րուց պատմութեան մէջ ունինք տեղիքս
«Նեկտաներոս... արարեալ Մարկիակս մո-
մեայ դնէր ի վերայ ստեղծմանն Ոլոմպիա-
դայ» (էջ 6, տպ. Վենետիկի 1842): Ընդ-
դժեալ բառս երեք օր. մահնակս, մի օր.
մարնակս. միւս եւս (օր.) ի լուս. մահա-
րակս» կը կարգան: Մարկիակ ընթերցուածն
ունին նաեւ Վիեննայի Թ. 947 եւ էջմ. 1664:
Այս տեղիքը վայրերիս իւր լատին թարգմա-
նութեան մէջ տուած է այսպէս. lectulum ei
fabricatur (հմտ. Տաշեան, Ուսումնասիրու-
թիւն Ստոյն Կալլիսթենէսի վարուց Աղեքսան-
դրի, էջ 216). ուստի իմաստն է «Մահիճ
փոքր», կամ Մահնակ, ինչպէս կը կարգան
երեք օրինակը:

Այս իմաստը կ'ընծայէ նաեւ Մարնակ,
որուն գոյութեան հին հայ բառամթերքին
մէջ՝ կը վկայէ Ոսկերեանի Եփեսացուց
թղթին Մեկնութեան հայ թարգմանիչը, երբ
կը գրէ. «Չկարիցե՞ս ի գետնի քուն լինել.
դահոյս արծաթապատս մի առնիցես, այլ
այնպիսի Մարնակս («օրինակ մի» կը կար-
գայ «Մահիմս») կազմեսլիր, որ ոչ ի ցոյց
իցես, այլ ի հանգիստ. մի փոփոկեայ գա-
հոյս, մի երիգապատ բազրիս» (էջ 816):

Նաեւ Մարկիակ «սխալագիր բառը»,
ինչպէս կ'անուանէ Աճառեան, Արմատական
Բառագիրք, Դ., 920, բոլորովին խոտելի
ընթերցուած մը չէ: Նկատի առնելով Մահ-
նակ եւ Մարնակ ընթերցուածները պիտի ա-
ռաջարկեմ ուղղել զայն եւ կարգալ Մարի-
նակ:

Կը ստանանք ասով Մահնակ, Մարնակ
եւ Մարիակ բառերը, որոնք իրենց կարգին
Մահիմ բառին նուազականը կը ներկայանան,
ուստի իրբեւ մահիմակ = մահնակ, ծագած
*մարի-իմէն:

Այս չորս ձեւերու արմատն է մարի, որ
ասոյ ընդմիջմբ եղած է մահ եւ հի անկ-
մամբ մար (մարեմ) եւ մեռ (մեռանիմ, կի-
սամեռ):

Այս երեւոյթը կը տեսնուի կարգ մը -րի
խմբի պատկանող բառերու մէջ ալ. զոր օրի-
նակ.

պարի-եմ, պահ-եմ, պատու-պար-եմ.
մահապարի, ճամպահ, ճամբար.
խոնարի, խոնար.

պատգարիել, պատգահիկ.
ահ, դարհ-ուրհիմ, արհ-աւերք, արհ-ական.
վիրի, վիհ, վիրապ.


Շապուրհ, Շապուհ, Sapor:

Մարիմ բառին աղերսը մարի = մահ
բառին հետ պէտք է փնտռել աղագրու-
թեան մէջ:

Հաւանօրէն նոյն մարի- արմատէն են
նաեւ Մարագ, Մար-ան (շտեմարան):

Մահնակ նուազականաձեւը ունի իւր
օրինակը Տապակ, սիոոց, բառին մէջ, որ
կ'ենթադրէ *տապիակ հնաձեւը, տապ ար-
մատէն, որ կ'երեւայ տապաստ, տապան(ակ)
բառերու մէջ:

Հ. Ն. Ա.



ԲԱՐԹԻՔԱՆ ՄԻՔԱՅԷԼ Յ., Դիցապաշտ Հեյլադամ
կամ Հեյլէն Դիք: Աքէք, տպ. Ատրուշամ, 1936,
80, էջ ԻԱ + 274. պատկերագրող, Գիմ՝ 5 անգղ.
շիլ.:

Հայ մատենագրութեան մէջ պակաս չեն
յոյն դիցարանութեան նուերուած գրութիւն-
ներ, բայց Մ. Յ. Բարթիքեանի ներկայ
գործը կը գերազանցէ իւր նախորդները: Դի-
ցապաշտ Հեյլադան իւր աստուածութիւննե-
րով կը ներկայանայ հատորիս մէջ. վերջա-
ւորութեան կցուած Երկու Ոսօքէն (էջ 273)
կ'իմանանք, որ երկրորդ հատոր մըն ալ
պիտի յաջորդէ ասոր, ուր պիտի պատմուի
գլխաւորաբար յոյն հերոսներու նկարագիր-
ներուն եւ սիրագործութիւններու մասին:

Աթէնքի Համալսարանի Ուսուցչապե-
տին՝ Աղամանգիոս Աղամանգիուի գնահա-
տական Յառաջարանը, յունարէն եւ հայերէն,
կը բանայ հատորս: Հեղինակը Ներածու-
թեան (էջ ԺԳ—ԻԲ) մէջ կը պարզէ ոգեւո-
րուած շեշտով Հեյլադայի բնութեան ներ-
շնչփմները՝ ի բնէ գեղարուեստասէր յոյն
հոգւոյն համար. կը ստուերագծէ յոյն դիցա-
րանութեան աղեցութիւնը յոյն ժողովուրդի
եւ անոր փիլիսոփայութեան վրայ: Դարձեալ
ընդհանուր գծերով կը շօշափէ հայ եւ յոյն
մշակութային մերձեցման եզրները պատմու-
թեան ընթացքին, յետոյ կը շարէ օգտադոր-
ծած աղբիւրները՝ յունարէն, անգլիերէն,
Փրանսերէն եւ հայերէն: Հեղինակը առթա-
պէս կ'անդրադառնայ գործքիս ընթացքին՝
հայ եւ յոյն դիցարանութիւններու համեմա-
տութեան: 5—266 էջերու վրայ կը փոռի

յոյն դիցարանութեան պատմութիւնը՝ տիե-
ղերածնունդէն սկսած:

Բարթիքեան իւր ներկայ երկով շնորհա-
ւորելի է. անոր պատմելու սահուն ոճը, հա-
ճելի ու կենդանի նկարագրութիւնները հրա-
պուրիչ կը դարձնեն գործիս ընթերցումը.
յաճախակի պատկերներ՝ դասական ու հին
արձաններէ կամ նկարներէ, որոնք յոյն դի-
ցարանութեան կը հային, կը շեշտեն այդ
հրապուրդը: Ընթերցողը կը զգայ թէ աշխա-
տանք չէ խնայուած այդ տեսակէտէ: Մենք
վստահ ենք, որ հեղինակին ներկայ գեղեցիկ
երկը սիրալիւր ընդունելութիւն պիտի գտնէ
մանաւանդ հայ երիտասարդութեան կողմէ,
որուն դաստիարակութեան կ'ուզէ նուերել
զայն: Յոյն դիցարանութեան կրթիչ ու մար-
դիչ ազդակը հելլէն ժողովուրդի դասական
պատմութեան մէջ փայլուն արտայայտուած
է, եւ մեր մտղթանքն է, որ Բարթիքեանի
ներկայ աշխատութեամբ հայ երիտասարդու-
թիւնն ալ նոր գրգիռ մ'ունենայ ոգեւորուե-
լու դադափարական գեղեցիկութենէ եւ գի-
տակցելու աճնական կորովի:

Կ'ուզէինք փակել մեր այս գնահատականը
կարեւոր մէկ ճշգրութեամբ: Ներածութեան
մէջ հեղինակը յոյն դիցարանութեան եւ անոր
բարոյական արժէքի մասին խօսելով՝ չի վա-
րանիր հաստատել թէ «Դելփիքի, Ելեւ-
սիս(ի)՝¹ եւ այլ կեղծոյններու կրօնական իմաս-
տութիւնները», որոնք անկէ սնած են, «պայ-
ծառ աստղը եղան՝ Բեթղեհէմի, սննդարար
կաթը՝ մսուրի մէջ պտուղով մանկան, առաջ-
նորդը՝ «երեսուն տարի անապատի մէջ մնա-
ցող»² Նազովրեցիին... դասատուն՝ «սիրե-
ցէք զմիմեանս» ուսուցանող բարոյախօսին եւ
վերջապէս, «Տէր անցցէ յինէ(ն)՝¹ զգաւաթս
այս»³ աղաղակող քրտնաթոր եւ «վասն փր-
կութեան մարդկանց» մեռնող եւ «երրորդ
օրը յարութիւն առնող» Յիսուս Քրիստոսին՝
կատարելագործեալ եւ սրբազրեալ ձեւով քա-
րոզած տիպար մաքրութեան, բարութեան,

¹ Փակագծեալները կ'աւելցնենք:
² Անտարակոյս պիտի ըլլայ «Բառասուն օր»,
Մատթ. Դ. 1, 2. յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ
ի Հոզուոյն՝ փորձել ի սատանայէ. եւ պահեալ զքառա-
սուն տիւ եւ զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ:
³ Ոսօքս իւր քերականական սխալով (հր. դիմա-
ւոր բայ եւ հայց. տէր բայի) եւ աշխարհաբար «գա-
ւաթ» բառով՝ շատ անյարմար է: Բաղձալի էր որ հե-
ղինակը ստուգէր տեղիքս. Մատթ. ԻԶ., 39. Հայր իմ,
եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն: Կամ Ղուկ.
ԻԲ., 42. Հայր, եթէ կամիս, անցր զբաժակս զայս
յինէն: